## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

2011թ. մայիսի 31-ին, թիվ 65-Ա
ք.Աշտարակ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և «Հայաստանի ազգային սկաուտական շարժում» հասարակական կազմակերպությանն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» թիվ 533-Ն որոշման պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Բյուրականի անտառտնտեսության 1.0 հա հատուկ պահպանվող տարածքն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել «Հայաստանի ազգային սկաուտական շարժում» հասարակական կազմակերպությանը՝ խաղահրապարակ կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. մայիսի 27-ին, թիվ 64-Ա
ք.Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրպետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով մարզպետարանին 2011թվականի տարեկան ծախսերով 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված գումարները և հիմք ընդունելով 2011թվականի մայիսի 27-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ կայացած քաղաքացիների ընդունելության արդյունքները՝ *որոշում եմ.*

1.Ներքոհիշյալ քաղաքացիներին հատկացնել դրամական օգնություն նշված գումարի չափով.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ապարան | Սարիբեկյան | Արմենուհի | 40000 դրամ |
| 2. | Աշտարակ | Աղամալյան | Համլետ | 25000 դրամ |
| 3. | Աշտարակ | Աբաղյան | Սիլվա | 25000 դրամ |
| 4. | Աշտարակ | Հարությունյան | Ջեմմա | 10000 դրամ |
| 5. | Ոսկեհատ | Մկրտչյան | Մկրտիչ | 15000 դրամ |
| 6. | Արտաշավան | Հայրապետյան | Ռոզիկ | 20000 դրամ |
| 7. | ՌԻջան | Մանվելյան | Վարդան | 20000 դրամ |
| 8. | ՌԻջան | Ազատյան | Գրիգոր | 20000 դրամ |
| 9. | Սասունիկ | Օհանյան | Լուսինե | 15000 դրամ |
| 10. | Կաքավաձոր | Սարգսյան | Գաբրիել | 30000 դրամ |
| 11. | Աշտարակ | Արսենյան | Ջեմմա | 25000 դրամ |

2. ՀՀ Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ հատկացնել նշված անձանց գումարները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

2011թ. մայիսի 26 թիվ 63 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ 837-Ն, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2323-Ն և 2007 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1554-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 357-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011թ. հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 2-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի բաժնի պահակի հաստիքային միավորով նախատեսված «31400.0» թիվը փոխարինել «32500.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. մայիսի 24-ին, թիվ 62-Ա
ք.Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածովի 3-րդ մասի 1)-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 113-Ն հրամանով հաստատված կարգի 13-րդ և 15-րդ կետերի պահանջներով, «Դիանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 2011 թվականի ապրիլի 27-ի թիվ 3 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային ենթակայության ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում խորհուրդների կազմը հաստատելու մասին» թիվ 70-Ա որոշման Թալինի հավելվածի 16-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1)«Դիանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի կազմում «Թաթուլ Մկրտչյան» բառերը փոխարինել «Արեգնազ Մանդալյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011թ. մայիսի 20-ին, թիվ 61-Ա
ք.Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով մարզպետարանին 2011թվականի տարեկան ծախսերով 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված գումարները և հիմք ընդունելով 2011թվականի մայիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ կայացած քաղաքացիների ընդունելության արդյունքները՝ ***որոշում եմ.***

1.Ներքոհիշյալ քաղաքացիներին հատկացնել դրամական օգնություն նշված գումարի չափով.

| | | | |
|---|---|---|---|
| 1. Սասունիկ | Պետրոսյան | Շողակաթ | 30000 դրամ |
| 2. Բյուրական | Խաչատրյան | Գառնիկ | 30000 դրամ |
| 3. Կաթնաղբյուր | Մարտիրոսյան | Ռուբիկ | 15000 դրամ |
| 4. Արագածավան | Գալստյան | Այծիկ | 40000 դրամ |
| 5. Աշտարակ | Հարությունյան | Անահիտ | 20000 դրամ |
| 6. Աշնակ | Գրիգորյան | Գոռ | 20000 դրամ |
| 7. Աշտարակ | Բադալյան | Լիլյա | 30000 դրամ |
| 8. Աշտարակ | Մանուկյան | Գայանե | 25000 դրամ |
| 9. Թալին | Սահակյան | Ամալյա | 25000 դրամ |
| 10.Թալին | Սարգսյան | Օլյա | 15000 դրամ |
| 11.Աշտարակ | Մելումյան | Սոնիկ | 10000 դրամ |
| 12.Աշտարակ | Նազարյան | Սաթենիկ | 15000 դրամ |
| 13.Աշտարակ | Շահբազյան | Իռա | 15000 դրամ |
| 14.Աշտարակ | Զազյան | Սոնա | 20000 դրամ |
| 15.Աշտարակ | Խաչատրյան | Խաչիկ | 30000 դրամ |
| 16.Ագարակ | Առաքելյան | Գոհար | 15000 դրամ |
| 17.Սասունիկ | Խաչատրյան | Քնար | 20000 դրամ |
| 18.Սասունիկ | Անտոնյան | Ջավահիր | 15000 դրամ |
| 19.Ոշի | Սարգսյան | Մարգարիտ | 15000 դրամ |
| 20.Բազմաղբյուր | Գրիգորյան | Եղիշե | 20000 դրամ |
| 21.Փարպի | Ավագյան | Ռուզաննա | 15000 դրամ |
| 22.Թալին | Սեֆիլյան | Հայկ | 30000 դրամ |

2. ՀՀ Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ հատկացնել նշված անձանց գումարները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. մայիսի 13-ին, թիվ 60-Ա
ք.Աշտարակ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով մարզպետարանին 2011թվականի տարեկան ծախսերով 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված գումարները և հիմք ընդունելով 2011թվականի մայիսի 13-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ կայացած քաղաքացիների ընդունելության արդյունքները՝ ***որոշում եմ.***

1.Ներքոհիշյալ քաղաքացիներին հատկացնել դրամական օգնություն նշված գումարի չափով.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Աշտարակ | Միքայելյան | Էմիլյա | 30000 դրամ |
| 2. | Աշտարակ | Շահբազյան | Վարդուհի | 30000 դրամ |
| 3. | Արագածոտն | Նադոյան | Վահան | 30000 դրամ |
| 4. | Արագածոտն | Մխիթարյան | Արսեն | 30000 դրամ |
| 5. | Թթուջուր | Վարդանյան | Մակիչ | 40000 դրամ |
| 6. | Արագածոտն | Ղազարյան | Ծովինար | 25000 դրամ |
| 7. | Աշտարակ | Կարապետյան | Ռաֆիկ | 10000 դրամ |
| 8. | Աշտարակ | Թորոսյան | Սոֆիա | 10000 դրամ |
| 9. | Աշտարակ | Խաչատրյան | Մանյա | 10000 դրամ |
| 10. | Աշտարակ | Իրիցյան | Գևորգ | 5000 դրամ |
| 11. | Աշտարակ | Դանիելյան | Անդրանիկ | 15000 դրամ |
| 12. | Արտաշավան | Հարությունյան | Սուսաննա | 15000 դրամ |
| 13. | Օշական | Ենոքյան | Թեհմինե | 15000 դրամ |
| 14. | Շամիրամ | Ուսուբյան | Խուդեդան | 20000 դրամ |

2. ՀՀ Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ հատկացնել նշված անձանց գումարները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. մայիսի 11-ին թիվ 59-Ա
ք.Աշտարակ

### ՅՈՒՐԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ Յուրիկ Ներսիսյանին /ծածկագիր 61-2.3-41/ շնորհել առավելագույնը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

2.Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների համաձայն վճարել հավելավճար՝ նրա հիմնական աշխատավարձի հինգ տոկոսի չափով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՄԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. մայիսի 11-ին թիվ 58-Ա
ք.Աշտարակ

### ՍԱԹԵՆԻԿ ՋՈՐՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Ջորյանին /ծածկագիր 61-2.2-11 / շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության առավելագույն՝ 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

2.Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների համաձայն վճարել հավելավճար՝ նրա հիմնական աշխատավարձի հինգ տոկոսի չափով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. մայիսի 11-ին թիվ 57-Ա
ք.Աշտարակ

### ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Գայանե Վարդանյանին /ծածկագիր 61-2.2-10 / շնորհել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության առավելագույն՝ 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

2.Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների համաձայն վճարել հավելավճար՝ նրա հիմնական աշխատավարձի հինգ տոկոսի չափով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ**

2011թ. մայիսի 10 թիվ 56 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107 հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 -րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. 2011 թվականի օգոստոսի 14-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ գյուղական համայնքում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի հերթական ընտրություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՄԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

2011թ. մայիսի 10 — թիվ 55 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 107 հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. 2011 թվականի օգոստոսի 7-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Արթիկ գյուղական համայնքում նշանակել և անցկացնել համայնքի ավագանու անդամների հերթական ընտրություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. մայիսի 6-ին, թիվ 54-Ա
ք.Աշտարակ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով մարզպետարանին 2011թվականի տարեկան ծախսերով 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված գումարները և հիմք ընդունելով 2011թվականի մայիսի 6-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի մոտ կայացած քաղաքացիների ընդունելության արդյունքները՝ ***որոշում եմ.***

1.Ներքոհիշյալ քաղաքացիներին հատկացնել դրամական օգնություն նշված գումարի չափով.

| | | | |
|---|---|---|---|
| 1.Բյուրական | Ռուստամյան | Կառլեն | 40000 դրամ |
| 2.Աշտարակ | Արշակյան | Գոհար | 25000 դրամ |
| 3.Աշտարակ | Պապյան | Աննա | 15000 դրամ |
| 4.Աշտարակ | Մակարյան | Ծովինար | 15000 դրամ |
| 5.Սասունիկ | Իգնաթևոսյան | Աշոտ | 20000 դրամ |
| 6.Փարպի | Գրիգորյան | Մնացական | 15000 դրամ |
| 7.Ապարան | Թադևոսյան | Լիլիթ | 25000 դրամ |
| 8.Ապարան | Միրզոյան | Ռոզա | 10000 դրամ |
| 9.Ծաղկահովիտ | Խանդոյան | Արարատ | 30000 դրամ |
| 10.Թալին | Բարսեղյան | Աննա | 40000 դրամ |

2. ՀՀ Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ հատկացնել նշված անձանց գումարները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2011թ. մայիսի 6-ին, թիվ 53-Ա
ք.Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2011թվականի ապրիլի 21-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 268-Ա որոշումը՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալի /ծածկագիր 61-1.2-1/, Աշտարակի ՄԾՏԳ-ի պետի /ծածկագիր 61-2.3-25/, գլխավոր մասնագետների /ծածկագիր 61-3.2-8/, /ծածկագիր 61-3.2-9/, առաջատար մասնագետների /ծածկագիր 61-4.1-15/, /ծածկագիր 61-4.1-16/, /ծածկագիր 61-4.1-17/, /ծածկագիր 61-4.1-18/, առաջին կարգի մասնագետների /ծածկագիր 61-4.3-1/, /ծածկագիր 61-4.3-2/, Ապարանի ՄԾՏԳ-ի պետի /ծածկագիր 61-2.3-26/, գլխավոր մասնագետի /ծածկագիր 61-3.2-10/, առաջատար մասնագետների /ծածկագիր 61-4.1-19/, /ծածկագիր 61-4.1-20/, /ծածկագիր 61-4.1-21/, առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 61-4.3-3/, Թալինի ՄԾՏԳ-ի պետի /ծածկագիր 61-2.3-27/, գլխավոր մասնագետի /ծածկագիր 61-3.2-11/, առաջատար մասնագետների /ծածկագիր 61-4.1-22/, /ծածկագիր 61-4.1-23/, /ծածկագիր 61-4.1-24/, առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 61-4.3-4/, Ծաղկահովիտի ՄԾՏԳ-ի պետի /ծածկագիր 61-2.3-28/, գլխավոր մասնագետի /ծածկագիր 61-3.2-12/, առաջին կարգի մասնագետների /ծածկագիր 61-4.3-6/, /ծածկագիր 61-4.3-7/, /ծածկագիր 61-4.3-8/, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը.

1) Աշխատակազմի ղեկավարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում /ծածկագիր 61-1.1-1/ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

ա) 11-րդ կետի <<ե>> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ե) Օրենքով սահմանված կարգով ապահովում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը.>>.

բ) 11-րդ կետի <<է>> ենթակետից հանել <<և կրտսեր >> բառերը.

գ) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր << է1>>, <<է2>> ենթակետերով.

<<է1) Աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, դիմում ներկայացրած, գործող հավաստագիր ունեցող և տվյալ կրտսեր թափուր պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիներից մեկին առանց մրցույթի նշանակում է քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում.

է2) քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար դիմած և նշանակված քաղաքացիների ցանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Խորհուրդ.>>.

2) Անձնակազմի կառավարման բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր 61-2.2-10/ անձնագրի 11-րդ կետի <<ե>> ենթակետից հանել <<և կրտսեր>> բառերը.

3) Անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր 61-3.1-4/ անձնագրի 11-րդ կետում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

ա) <<է>> ենթակետից հանել <<և կրտսեր>> բառերը.

բ) <<թ>> ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<թ) քաղաքացիայան ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է Աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հարցաշարերի հրապարակման աշխատանքները.>>.

4) Անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր 61-3.3-5/ անձնագրի 11-րդ կետում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

ա) << ե>> ենթակետից հանել <<և կրտսեր>> բառերը.

բ) <<է>> ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<է) իրականացնում է Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող հանձնաժողովների աշխատանքների համակարգչային սպասարկումը.>>.

գ) <<ը>> ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<ը) իրականացնում է Աշխատակազմի առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման ավարտից մեկ ժամ հետո տեսանելի ցուցանակի վրա մրցույթի և ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի առկայության կամ բացակայության մասին տեղեկության հրապարակման աշխատանքները.>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ